<<Էդիթ Պրինտ>> հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների(նրանց օրինական ներկայացուցիչների) հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

Հաստատություն՝ <<Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 7 մանկապարտեզ >>

ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Կարապետյան Քրիստինե

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն…… 3

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

ԳԼՈՒԽ 1 1Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

1.1 Ընտանիքի եվ մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում……..….4

1.2 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին ……...7

Գլուխ 2 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը

2.1 Ընտանիք մանկապարտե համագործակցության մոդելներ…….10

2.2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մոդելներ «Արտաշատի թիվ 7 » մանկապարտեզում ……..11

Եզրակացություն……..15

Օգտագործված գրականության ցանկ……. 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Յուրաքանչյուր անհատի ճակատագիրը դասավորվում է դեռ մանկուց: Երեխաների դաստիարակության, զարգացման, ապագայի ձևավորման մեջ որքան մեծ է ընտանիքի դերը դրանից էլ զատ՝ մանկապարտեզինը: Մեր աշխատանքի բուն նպատակը հնարավորինս ներկայացնել մանկապարտեզ-ընտանիք կապի առանձնահատկությունները, առավելությունները երեխայի դաստիարակության հարցում: Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է: Սակայն համգործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնել հաջողության: Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզը շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը և թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների, հակակրանքների մասին: Ծնողների հետ տարվող աշխատանքի բարելավման բոլոր միջոցները ամենից առաջ պետք է ուղղվեն նախադպրոցական հաստատության և ընտանիքի համագործակցության ամրապնդմանը՝ երեխաների բազմակողմանի դաստիարակության և զարգացման գործում:

Գլուխ 1Մանկավարժական աշխատողի համագործակցությունը սաների ծնողների հետ՝ սաների կրթական աշխատանքների կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում

1.1 Ընտանիքի եվ մանկապարտեզի դերը երեխայի զարգացման հարցում

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում։ Համագործակցության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին։
Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները.

1. ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիրակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին։
2. ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներին ու շտկել թերությունները ։
3. ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի ման- կավարժական գործընթացին։
4. Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ։

Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելի կենտրոնում երեխան է։ Իհարկե, նա է իր կրթության ու զարգացման հաջողության գործի գլխավոր դերակատարը մանկապարտեզում և ընտանիքում։ Սակայն

համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխային՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համա- գործակցության հետևյալ ուղղությունները.

- Շաբաթական կամ ամսական լրատուներ. տեղեկություններ են տալիս այն գործողու- թյունների մասին, որոնց մեջ ներգրավված են եղել երեխաները:

- Ծնողական ժողովներ. քննարկվում են կրթության կամ երեխայի զարգացման փուլերին առնչվող մտահոգությունների մասին հարցեր:

- Ծնողական համաժողովներ. դրանց նպատակը ընտանեկան դաստիրակության փորձի փոխանակումն է:

- Առավոտյան հանդիպումների ընթացքում ծնողներին նախապես հայտնում են ներկայացվող թեմաները, որոնք սովորաբար զետեղվում են շաբաթական լրատունե- րում:

- Հանդիպումներ երկրորդ կեսին. դաստիարակները ներկայացնում են այն գործողու- թյունները, որոնք հաջողությամբ են իրականացվել երեխաների հետ և կարող են կա- տարվել նաև տանը:

- Գրքերի փոխանակումներ. սրանք ոչ պաշտոնական հանդիպումներ են այն ծնողների և մանկավարժների համար ովքեր հետաքրքրվում են գրքով:

- Այցելություններ ընտանիք.

- Բաց դռների օրեր.

- Զրույցներ՝ անհատական և խմբային.

- Ցերեկույթներ.

Կարևոր տեղ է հատկացվում ծնող-մանկավարժ արդյունավետ ժողովների անցկաց- մանը:

Ուսումնական տարվա սկզբին անցկացվող ծնողական ժողովների ժամանակ ծնող- ները ծանոթանում են տարվա ընթացքում նախատեսված աշխատանքներին, կրթու- թյան և դաստիարակության պլաններին: Ձևավորում են

անկյուններ, որոնցում տեղա- դրվելու են ծնողների համար խորհրդատվական նյութեր՝ բոլոր բաժինների ծրագրով։

Հատուկ թղթապանակներով ներկայացնում են հակիրճ տեղեկատվական խորհրդա- տվություններ՝ մանկավարժի, հոգեբանի և բժշկի կողմից։

Ժողովների անցկացման ձևերը։

-Ստեղծե՛ք ընկերական մթնոլորտ՝ թեթև հյուրասիրություն առաջարկելով։ Ծնողների հետ քննարկե՛ք երեխային առնչվող սոցիալական, հուզական, կրթական, ճանաչողա- կան և ֆիզիկական նպատակները։

-Ճանաչելով ընտանիքներին՝ դուք ավելի հեշտությամբ կհարմարվեք ծնողների միջև առկա անհատական տարբերություններին։ Ծնողների վերաբերմունքն ըստ իրենց կրթության և փորձի՝ կարող են տատանվել գոհունակությունից մինչև թերհավատու- թյուն։

Ծնողների հետ կազմակերպվող անհատական զրույցները գնահատելի են նրանով, որ դաստիարակին հնարավորություն է տալիս միշտ շփման մեջ լինել ընտանիքի հետ և ավելի ազատ, բաց խոսել երեխայի մասին։ Այդ զրույցները լինում են կարճատև, բայց կարող են ձեռք բերել շատ մեծ նշանակություն, քանի որ դաստիարակին և ընտանի- քին իրազեկ են դարձնում երեխայի կյանքի բոլոր իրադարձություններին և հնարավո- րություն են տալիս անմիջապես ազդել երեխայի վարքի վրա։ Հարկ չկա ծնողների հետ զրույցը սկսել գանգատներից։ Ավելի նպատակահարմար է նախ նշել երեխայի բնավո- րության դրական կողմերը, լավ արարքները։

Զրույցն ավարտելիս պետք է ծնողին առաջարկել ընհանուր ուժերով ներգործել երե- խայի վրա։ Խորհրդատվությունները կարելի է անցկացնել անհատական և փոքր խըմ- բերով։

Ծնողները պետք է ակտիվորեն մասնակցեն մանկապարտեզի կյանքին, ընդգրկվեն օգտագործվող ավանդութային և ոչ ավանդութային աշխատանքային ձևերում ու մի- ջոցառումներում։

Առաջարկությունների տուփ

Ծնողներին առաջարկվում է՝ իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություն- ներն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով։ Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզ- զող հարցերը։

Պատի տեղեկատվական թերթեր

Պատի տեղեկատվական թերթն օգտակար է՝ ընտանիքիներին միշտ թարմ տեղեկատ- վություն հաղորդելու առումով։ Դրա միջոցով հնարավոր է

ազդարարել ժողովները, հատուկ իրադարձությունները, ընտանիքի համար նախատեսված միջոցառումները, ընդհանուր առմամբ ուսումնական հաստատության անցուդարձը։

Մանկապարտեզ-ընտանիք կապը հիմնվելու է փոխադարձ վստահության վրա։ Արդյունավետ հաղորդակցությունը բազմապատկում է այն։

Խորհուրդներ՝ ուղղված ծնողների հետ համագործակցության արդյունավետ կազմակերպմանը

. Ծնողներին պարապմունքների և կազմակերպչական աշխատանքների մեջ ներգրա- վելու համար օգտագործե՛ք բազմատեսակ ձևեր։ Ստեղծագործական և ճկուն մոտե- ցում ցուցաբերե՛ք։

. Ժողովները և հանդիպումները կազմակերպե՛ք ծնողներին հարմար ժամերին։

. Թույլ տվեք, որ ընտանիքն ինքը որոշի ընդհանուր գործին իր մասնակցության լավա- գույն ձևը։

. Պահպանե՛ք սերտ կապ։

Հետևե՛ք, որ մանկավարժական կոլեկտիվի անդամը յուրաքանչյուր երեխայի ծնողնե- րի հետ զրուցի առնվազն շաբաթը մեկ անգամ։

. Փորձե՛ք ներգրավել ամբողջ ընտանիիքին։

.Հենվե՛ք երեխաների և ընտանիքի ուժեղ կողմերի վրա և առձագանքե՛ք դրականորեն։

. Եղե՛ք համբերատար։ Պահպանե՛ք գաղտնիությունը։

1.2 Ընտանիքի ներգրավումը մանկապարտեզի կյանքին

Ընտանիքը առաջնային միջավայր է երեխայի համար։

Ընտանեկան մոդելի լավ կամ վատ օրինակը ցույց է տալիս երեխային, թե ինչպես նա պետք է իրեն պահի մյուս միջավայրերում, մանկապարտեզում հասակակիցների հետ և այլն։ Ընտանիքն ու մանկապարտեզն ունեն իրենց առանձնահատուկ դերը, չեն կարող փոխարինել միմյանց։ Երեխաների

սոցիալական զարգացման վրա ներազդումը իրականացվում է ընտանիքում, որը հանդիսանում է գիտելիքների, արժեքների վերաբերմունքի դերերի և սովորույթների ուղեկիցը սերնդից-սերունդ: Սոցիալական զարգացման հուսալի երաշխիքն է:

Այսօր չի կարելի թաքցնել այնպիսի բացասական երևույթներ, ինչպիսիք են ծնողների հարբեցողությունը, երեխայի անտեսումը, որոնք հաճախ հանգստյան օրերին մնում են իրենց վրա, և որոնց միակ զբաղմունքը բակում քայլելն է: Երեխայի դաստիարակությունը անհատական է և կախված է ծնողների բնույթից:

Գոյություն ունի ծնողների մի կատեգորիա, ովքեր իրենց աչալուրջ են պահում, անտեսում են դաստիարակների խորհուրդները: Նման ծնողները կարծում են, որ մանկապարտեզն այն վայրն է, որտեղ նրանք պարտավոր են մեծացնել իրենց երեխաներին Ծնողները համարվում են երեխայի համար առաջին ուսուցիչը և օրինակ ծառայողը: Այն մարդիկ, ովքեր անմիջապես շրջապատում են երեխային, պետք է հետևեն իրենց խոսքին և կատարած քայլերին, փոքրիկի հետ աշխատող մանկավարժը պարտավոր է ուսումնասիրել նրանց ընտանիքը:

Ընտանիքները տարբեր են իրենց բնույթով, կազմով և գործունեությամբ: Դաստիարակը պետք է տա ընտանիիքին տարբեր գաղափարներ և տեղեկություններ, որոնք կօգնեն երեխայի հետ հետագա շփմանը: Նա պետք է տարբեր ռազմավարություններ կիրառի, լինի ճկուն, ստեղծագործ, բարեհամբույր, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի նիստուկացին ավելի է հեշտացնում համագործակցությունը:

Ծնողները կարող են ներգրավվել տարբեր նպատակներով: Օրինակ՝ նյութական միջավայրի բարելավմանը, խոհանոցային աշխատանքում, միջոցառումների ու էքսկուրսիաների ժամանակ: Շփմանը նպաստում են նաև ծնողական հավաքները, սեմինարները: Ընտանիք-մանկապարտեզ դրական համագործակցությունը երեխաների շուրջ ստեղծում է մի միջավայր, որտեղ նրանք աշխատում են երեխայի զարգացմանն ու դաստիարակությանն ուղղված ընդհանուր նպատակներին հասնելու համար:

Երեխան ամեն ինչ առաջինը սովորում է և փորձում է հենց ընտանիքում սկսած կերակրվելուց մինչև ընթերցանություն: Ընտանիքի անդամն են երեխայի համար կենսականորեն կարևոր որոշումներ ընդունում, կրթում և դաստիարակում:
Երեխան իր վրա կրում է ընտանիքի ազդեցությունը և դաստիարակությունը, պետք է լրջորեն հաշվի առնի անձի այդ փաստը: Երեխայի հետ աշխատելիս ամրապնդի կապը ընտանքի հետ՝ նկատի ունենալով դրանց առանձնահատկություններ և տարբերությունը: Երեխայի հետ աշխատող դաստիարակը պետք է խոսի ծնողի հետ, քննարկի երեխային վերաբերվող բոլոր խնդիրները: Ծնողի հետ արդյունավետ հաղորդակցում ապահովելու համար, դաստիարակը պետք է բազմաբնույթ գործողություններ ծավալի, տարբեր ռազմավարություն կիրառի, լինի ստեղծագործ, ճկուն, բարեհամբույր, մեծահոգի, համբերատար, բանիմաց և հոգատար: Ծնողի տեղեկացված լինելը երեխայի ցանկացած արարքի մասին, էլ ավելի է հեշտացնում համագործակցությունը ծնողի հետ, ավելի միավորում է նրանց որպես գործընկերներ և արդյունավետ դարձնում աշխատանքը: Յուրաքանչյուր ծնող պետք է լավ գիտակցի, թե ինչ է դաստիարակում իր երեխայի մեջ, գիտակցի նաև, որ աշխատանքում աճում է ապագա քաղաքացի և ապագա մարտիկ: Ծնող իր աշխատանքով պետք է օրինակ ծառայի երեխային: Երեխան ծնողի նայելիս պետք է տեսնի նրա աշխատասիրությունը, այլ ոչ թե հագուկապը:
Մենք դաստիարակում ենք երեխային յուրաքանչյուր պահի, նույնիսկ այն ժամանակ, երբ ուղղակի նայում ենք նրան: Երեխայի դաստիարակումը ավելի դյուրին է, քան վերադաստիարակումը: Բոլոր բացթողումները դաստիարակության ժամանակ նորից սովորեցվում են վերադաստիարակության ժամանակ: Պահանջվում է ավելի շատ ներուժ և համբերություն: Այս ամենը շատ ժամանակ հյուծում է ծնողին և փչացնում ծնող-երեխա կապը: Ծնողները ավելի շատ ջանք ու եռանդ պետք է գործադրեն դժվար դաստիարակվող երեխաներին կարգի բերելու համար:

Ծնողությունը մեր կյանքի ամենակարևոր ոլորտն է: Մեր երեխաները մեր երկրի ապագա քաղաքացիներն են և աշխարհի քաղաքացիներ:Մեր երեխաները ապագա

հայրեր և մայրեր են: Նրանք նույնպես կլինեն իրենց երեխների դաստիարակները: Երեխաները պետք է մեծանան՝ որպես հիանալի քաղաքացիներ, լավ հայրեր և մայրեր, բայց սա բոլորը չէ. մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակումը մեր երջանիկ ծերությունն է, աղքատ դաստիարակումը մեր ապագա վիշտն է: Սրանք մեր արցունքներն են, սա մեր մեղքն է այլ մարդկանց, ամբողջ երկրի առջև:

Գլուխ 2 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցությունը

2.1 Ընտանիքի և մանկապարտեզի համագործակցության մոդելներ

Ծնողների հետ համագործակցությունը վաղ մանկական և նախադպրոցական տարիքի երեխաների կրթական արդյունավետ ծրագրի անհրաժեշտ մասն է կազմում: Ծնողները մշտապես կարիք ունեն իմանալու մանկապարտեզի տեսակետն իրենց երեխայի մասին: Միևնույն ժամանակ մանկապարտեզն իրապես շահում է ծնողների՝ տվյալ բնագավառին իրազեկվածությունից և երեխայի դաստիարակության գործին նրանց ներդրումներից: Դրա շնորհիվ մանկավարժները հնարավորություն են ունենում հասնել երեխայի վարքի դրդապատճառների առավել համակողմանի պատկերացման: Համագործացության արդյունքում թե՛ ծնողը, թե՛ դաստիարակը արժեքավոր տեղեկություններ են ստանում երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, համակրանքների ու հակակրանքների մասին: Սակայն համագործակցությունն ինքնին չի կարող հաջողակ երեխաներ ունենալու նախապայման դառնալ: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել և շահագրգռել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության: Առաջարկում ենք մանկապարտեզի և ընտանիքի կանոնավոր ու արդյունավետ համագործակցության հետևյալ ուղղություններ: Մանկապարտեզ-ընտանիք համագործակցության արդյունքում պետք է իրականացվեն հետևյալ խնդիրները.

1. ծնողներին ծանոթացնել մանկապարտեզում իրականացվող մանկավարժական գործընթացի առանձնահատկություններին, նախադպրոցականի դաստիրակության և զարգացման ժամանակակից մոտեցումներին։

2. ճիշտ հաղորդակցվել երեխայի հետ, գնահատել նրա ձեռքբերումներին ու շտկել թերությունները

3. ապահովել յուրաքանչյուր ծնողի ակտիվ մասնակցությունը մանկապարտեզի մանկավարժական գործընթացին։

4. Աշխատանք տանել ծնողների մանկավարժական գիտելիքների բարելավման ուղղությամբ։

2.2 Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության մոդելներ «Արտաշատի թիվ 7 » մանկապարտեզում

Մանկապարտեզի գործունեության մեջ ընտանիքի ներգրավումը դարձել է շարունակական գործընթաց։ Այդ գործընթացի կազմակերպումը տարբեր մանկապարտեզներ յուրովի են պատկերացնում։ Ծնողների հետ աշխատանք կազմակերպելիս օգտագործում են բազմազան անհատական և կոլեկտիվ ձևեր՝ կոնսուլտացիաներ, զրույցներ, ժողովներ, ընտանեկան դաստիարակության փորձի փոխանակման թեմատիկ կոնֆերանսներ:

Համագործակցության նախապայմաններից գլխավորը խորհրդակցության ապահովումն է: Դրա համար «Արտաշատի թիվ 7 » մանկապարտեզը օգտագործում է 21-րդ դարի ամենաարդի գործիքը՝ համացանցը, մեդիան: Մանկապարտեում առանձնակի ուշադրություն են դարձնում ծնողների կրթությանը: Նրանց համար կազմակերպվում են տարբեր սեմինար-պարապմունքներ:

Մանկապարտեզում առկա է նաև առաջարկությունների տուփ ծնողներին առաջարկվում է իրենց մտքերը, մտահոգությունները, առաջարկություններն ու հարցերը մանկավարժական կոլեկտիվի անդամներին ներկայացնել հատուկ տուփի միջոցով: Նրանք կարող են տուփի մեջ գցել գրավոր ձևակերպված իրենց հուզող հարցերը: Սաների համակողմանի և արդյունավետ զարգացման համար մեծ է ծնողի դերը: Ծնողը ծանոթանում են մանկապարտեզի գործունեությանը:

Ծնողը ոչ միայն պատվիրատու է, գործընկեր, այլև իր երեխային վերաբերող նյութի յուրացնողը, իրագործողն ու տարածողը: Համացանցում ստեղծել ենք ծնողական խմբի ակումբ, որը հենց ծնողներն էլ վարում են: Այստեղ տեղադրվում են աշխատանքային նախագծերը, ուսումնական նյութերը: ընտանիքը ոչ թե դեպքից դեպք, այլ մշտապես տեղյակ է մանկապարտեզի ծրագրերին, գործունեությանը, մանկավարժական մոտեցումներին և մեթոդիկային:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով մանկապարտեզ-ընտանիք հարաբերությունների համագործակցությունը, եկանք մի շարք եզրահանգումների.

Երեխայի դաստիարակության և կրթության համար հիմնական պատասխանատվության կրողն ընտանիքն է: Մանկապարտեզը լրացնում, լավագույն դեպքում օգնում է ծնողին, ավարտին հասցնում նրա սկսած աշխատանքը՝ ստեղծելով առողջ, զարգացնող միջավայր՝ երեխայի զարգացման համար:

Ընտանիք-մանկապարտեզ համագործակցության հաջողությունը կախված է ընտանիքի և մանկապարտեզի փոխհարաբերությունից:Մանկապարտեզը պետք է աշխատի ընտանիքի հետ, պետք է պահպանի բարեկամական, գործընկերային հարաբերություններ, որովհետև մանկապարտեզ-ընտանիք կապի ամրապնդման համար կարևորվում է մեր համատեղ աշխատանքը, որն էլ երկուստեք հաճելի է: Այն պարտեզներում, որտեղ ընտանիք-մանկապարտեզ համագործակցությունը կարևորվում է, երեխաները ավելի ազատ են, ինքնավստահ, հանգիստ և երջանիկ: Բոլոր տեսակի գործընկերության հարաբերությունները ընթանում են կողմերի հավասարության, փոխադարձ գոհունակության և հարգանքի վրա: Դա արտացոլվում է երեխայի դեմքին և արարքների մեջ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս «Մանկավարժություն», Երևան 2005թ.

2. Ղույումչյան Գ. Ե. «Մանկավարժություն», գիրք 2, Երևան 2005թ.

3. Մակարենկո Ա. Ս. «Դաստիարակություն ծնողության վերաբերյալ», 1940թ.

4. Մարության Ա. Ս., Դալլաքյան Ա. Մ. «Նախադպրոցական մանկավարժություն» բուհական դասագիրք, Երևան 2008թ.

5. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար», Երևան 2010թ.

6. Քայլ առ քայլ «Այնքան ծանոթ և անծանոթ մեր երեխան»

7. Պետրոսյան Հ. Հ. «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաները», 1-ին և 2-րդ մաս, Երևան 2007թ.